



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 24 » « *փետրվար* » 2020թ. № 76-ՉԿ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն միջազգային համագործակցության վարչության միջազգային ծրագրերի կառավարման ու մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Քրիստինե Խաչատրյանի կողմից ծառայողական պարտականությունները չկատարելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) Նախարար Է. Գրիգորյանի մոտ 2020 թվականի հունվարի 20-ին կայացած գործակարգավարական խորհրդակցության N 1 արձանագրության 15.9 կետը սահմանված ժամկետում և անհարգելի պատճառով չկատարելու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

- 1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,
- 2) Նաիրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,
- 3) Մերի Բաբայան - Անձնակազմի կառավարման բաժնի պետ,
- 4) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:


4. Ծառայողական քննությունն անցկացվում է 15 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

2/27/2020

X 

ՎԱՀԵ ԶԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«24» փետրվարի 2020թ.
ք. Երևան